52-ՐԴ ՆԻՍՏ

27 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրների օթյակում են Մինիստր-նախագահը, լուսավորության և իրավարարության մինիստրները:

Առաջարկվում է հենց այսօր քննության առնել տաճկահայերի Բ համագումարի համար պահանջված գումարի խնդիրը, որը, սակայն, կարծիքների փոխանակությունից հետո, որոշվում է թողնել հաջորդ նիստին՝ համաձայն ընդունված կարգի:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Հարցապնդում է անում այն վիրավորանքի համար, որ հասցրել է իրեն քաղաքի կոմենդանտ Շահխաթունին խորհրդարանի շենքում:

Նախագահ - Հայտարարում է, որ այդ մասին նախագահությունը դիմել է պատշաճ իշխանության, հետևապես խնդիրը պետք է սպառված համարել և անցնել հերթական խնդիրների:

Պարենավորման մինիստր - Սոց. դեմ[ոկրատների] ֆրակցիայի հարցապնդման առթիվ նկարագրում է պարենավորման այն ծանր վիճակը, որ ունի ներկայումս Հայաստանը: Դրությունը մի քիչ թեթևացնելու համար ասում է, որ գործակալներ է ուղարկել բոլոր շրջանները՝ թուրքական գյուղերից հացահատիկ գնելու: Սակայն մեր փրկությունը դրանով չի ապահովվիլ, այլ այն ժամանակ միայն, երբ կապ կունենանք դրսի աշխարհի հետ:

Ն. Աղբալյան - Դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է ամենախիստ քննություն կատարել պարենավորման բաժանմունքի մեջ ծառայողների վերաբերմամբ և շատ ծանր պատժի ենթարկել զեղծարարներին, հակառակ դեպքում ամեն մի քննադատություն կլինի ապարդյուն և նույնիսկ վնասակար:

Ավելացնում է, որ իր անհատական կարծիքով, պետք է դիմել Ամերիկային՝ նկարագրել դրությունը և խնդրել հաց:

Մտքերի փոխանակությունից հետո խորհրդարանն ընդունում է դաշնակցական ֆրակցիայի հետևյալ բանաձևը.

«Լսելով հարցապնդումը և պարենավորման մինիստրի զեկուցումը, խորհրդարանը հանձնարարում է խորհրդարանի պարենավորման հանձնաժողովին քննել պարենավորման բաժանմունքի հաշիվները և զեկուցել խորհրդարանին»:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 15 հունվարի 1919թ.